ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
15 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 503-Ա

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺՆԵՄԱՍԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 21-ի N 631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Ռաֆֆու փողոց տուն 19 հասցեի բնակչուհի Ռիտա Երջանիկի Սարգսյանի 2023 թվականի օգոստոսի 7-ի թիվ 3199 դիմումը՝ իր անչափահաս երկու թոռնիկներին՝ Լիանա Արթուրի Տերոյանին (ծնված 2010 թվականի հոկտեմբերի 11-ին, ծննդյան վկայական ԱԲ 097529) և Արամ Արթուրի Տերոյանին (ծնված 2008 թվականի հուլիսի 31-ին, ծննդյան վկայական ԱԱ 240931) բաժնային սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, օտարելու վերաբերյալ և Փարաքար համայնքի <<Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի>> 2023 թվականի օգոստոսի 10-ի թիվ 17 արձանագրությամբ տրված դրական եզրակացությունը. **Որոշում եմ՝**

1. Թույլատրել Ռիտա Երջանիկի Սարգսյանին (ծնված՝ 1962 թվականի հոկտեմբերի 12-ին, անձնագիր՝ AU0525615, տրված 26.11.2021թ., 057-իկողմից) կնքելու իր երկու անչափահաս թոռնիկներին՝ Լիանա Արթուրի Տերոյանին (ծնված 2010 թվականի հոկտեմբերի 11-ին, ծննդյան վկայական ԱԲ 097529) և Արամ Արթուրի Տերոյանին (ծնված 2008 թվականի հուլիսի 31-ին, ծննդյան վկայական ԱԱ 240931) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ վկայական N 24072023-04-0051) Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող 04-094-0303-0019 կադաստրային ծածկագրով նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝

վարելահող, անշարժ գույքի 1/12-ական բաժնեմասերը օտարելու գործարք՝ ի շահ անչափահաս երեխաների:

2. Հսկողություն սահմանել անչափահաս երեխաներ՝ Լիանա Արթուրի Տերոյանի (ծնված 2010 թվականի հոկտեմբերի 11-ին, ծննդյան վկայական ԱԲ 097529) և Արամ Արթուրի Տերոյանի (ծնված 2008 թվականի հուլիսի 31-ին, ծննդյան վկայական ԱԱ 240931) տատիկի՝ Ռիտա Երջանիկի Սարգսյանի՝ (ծնված՝ 1962 թվականի հոկտեմբերի 12-ին,անձնագիր՝ AU0525615, տրված 26.11.2021թ., 057-իկողմից) նկատմամբ:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Փարաքար համայնքի ղեկավարին՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռիտա Երջանիկի Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. ՕԳՈՍՏՈՍԻ 15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 504-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ, ՀՀ Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքով, ընդունված 2019թ.-ի նոյեմբերի 19-ին N ՀՕ-225-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Միքայել Արթուրի Պետրոսյանի 2023 թվականի հուլիսի 28-ի N 3049 դիմումը, ***որոշում եմ՝***

1. Միքայել Արթուրի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N 17032023-04-0005), Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող 04-094-0559-0008 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.1764 հա մակերեսով հողամասը, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ վարելահող, (գոտին՝ Մերձարաքսյան, 2-րդ կարգի վարելահող՝ կադաստրային արժեքը՝ մեկ քառակուսի մետրի համար 448 դրամ) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա, որպես հասարակական կառուցապատման հող: Հասարակական նշանակության շինություն կառուցելու համար:

2. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետրին խաղողի համար 6386,3 դրամ) 1764 քառակուսի մետրի համար կազմում է 11 265 433,2 (տասնմեկ միլիոն երկու հարյուր վաթսունհինգ հազար չորս հարյուր երեսուներեք դրամ քսան լումա) ՀՀ դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքարի համայնքի բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության 900325191139 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3. Հողամասին տալ հասցե. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Ի. Գասպարյան փողոց թիվ 40 հողամաս (ծածկագիր 04094WLBBULR):

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5. Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման վրա Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության համաձայն:

6.Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. օգոստոսի 17

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 505-Ա

ՀԱՐԱՋԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքար համայնքի Այգեկ բնակավայրի վարչական ղեկավարի զեկուցագրերը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ընտանիքի անդամին կորցրած բնակիչներին ցուցաբերել 120 000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ կատարել համապատասխան ձևակերպում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. ՕԳՈՍՏՈՍԻ 17
գ.Փարաքար

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի

Փարաքար համայնքի ղեկավարի

2023 թվականի օգոստոսի 17-ի

թիվ 505-Ա որոշման

Ցուցակ

Հարազատին կորցրած ընտանիքների դրամական օգնություն ստացողների

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	հասցեն	Գումարը /ՀՀ դրամ/
1.	Զեյնալյան Սեյրան Հայկազի	Գ.Այգեկ	40 000
2.	Աբրահամյան Վահանուշ Ալեքսանի	Գ.Այգեկ	40 000
3.	Հակոբյան Ասատուր Ժորայի	Գ.Այգեկ	40 000
	ընդամենը		120 000

Աշխատակազմի քարտուղարի պ/կ՝ Ա.Վարդանյան